ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ, ԼՈՌԵ 0047
Զ. ՅՈՎՍԵՓՅԱՆ 26
ՀԵՌ. +374 10 65 00 15
e-mail: support@armtv.com

№ Ա.Հ./03-73/21
«30» օգոստոս 2021թ.

«Պրաքսիս» ՍՊ ընկերություն
Տնօրեն Հովհաննես Շահնազարյանին

Հարգելի պարոն Շահնազարյան,

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ Ընկերության և «Պրաքսիս» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքվել է ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2-1 գնման պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/, որով ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

Սակայն, հուլիս ամսվա ընթացքում ավտոլվացման կետը պարբերաբար աշխատել է աշխատանքային գրաֆիկի էական խախտումներով, ինչի արդյունքում տրամադրված կտրոնները չեն իրացվել, և ավտոմեքենաները հաճախակի չեն սպասարկվել, իսկ 2021 թվականի օգոստոսի 1-ից «Պրաքսիս» ՍՊ Ընկերությունն այլևս չի մատուցել պայմանագրով սահմանված ծառայությունը:

Հաշվի առնելով «Պրաքսիս» ՍՊ Ընկերության պայմանագրային պարտավորությունների չկատարումը, և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի բ/ ենթակետը՝ Ընկերությունը միակողմանի լուծում է ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2-1 գնման պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/2-1 ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված, և պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագրի միակողմանի լուծման մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

Գործադիր տնօրենի տեղակալ-
ֆինանսական տնօրեն՝ **Արարատ Հակոբյան**

Կատարող՝
Գնումների կազմակերպման բաժնի պետ
Գոհար Կարապետյան
Հեռ: 010 65 00 15 (1-70)